ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022 թվականի հոկտեմբերի 19-ի N 1- Լ

Ուսումնասիրելով և քննարկելով «Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան» և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամները «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին միացման ձևով վերակազմակերպելու և «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը վերանվանելու մասին ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, լսելով լիազոր մարմնի ներկայացուցիչների՝ փոխնախարարներ պարոն Թռչունյանի և տիկին Անդրեասյանի մեկնաբանություններն ու պարզաբանումները, գիտական խորհրդի անդամների մտահոգությունները, կարծիքներն ու առանձին դեպքերում տարամիտվող, միմյանց հակասող մոտեցումները վերոնշյալ նախագծի վերաբերյալ՝ առաջարկում եմ հաստատել գիտական խորհրդի հետևյալ որոշումը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հավատարիմ իր առաքելությանը, որդեգրած սկզբունքներին, հարգելով իր և գործընկեր բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների իրավունքները, պատրաստակամ է իր ողջ ներուժով նպաստել ՀՀ-ում մանկավարժական բարձրագույն կրթության համակարգի զարգացման, կրթության որակի ապահովման գործընթացներում խնդիրների մասնագիտական տեսանկյունից նպատակահարմար, հավասարակշռված, պատասխանատու և առանց ցնցումների լուծմանը:
2. Պատրաստել և լիազոր մարմնին ներկայացնել վերոնշյալ բուհերի միավորման հարցի վերաբերյալ մասնագիտական, մանկավարժական-մեթոդական, կառավարչական, ընթացակարգային տեսանկյուններից հիմնավորված, փաստարկված առաջարկությունների փաթեթ հետագա շահագրգիռ քննարկումների համար:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ